

Ամսաթիվ
2006-10-26

Գործի No
3-2050/ՏԴ

Դատարան
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ

Հայցվոր
Ուոթերլոկ

Պատասխանող
ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

Խնդիր
Արդյո՞ք ապրանքային նշանը առաջացնում է արդեն իսկ գրանցված «Արմենիա» ապրանքային նշանի իմաստային զգացողություն, քանի որ նշված երկու ապրանքային նշանները նույնական են ինչպես ծայնային, այսինքն՝ հնչյունային, այնպես էլ իմաստային առումով, եթե դրանք գրված են տարբեր լեզուներով:

Դատական ակտ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
3-2050 (ՏԴ)
քաղաքացիական գործերով
2006թ.
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 5-1838
Նախագահող դատավոր՝ Ե.Խունդկարյան

Քաղաքացիական գործ թիվ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ → Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՋՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006 թվականի հոկտեմբերի 26-ին
դռնբաց դատական նիստում, քննելով երրորդ անձ «Բջնի» հանքային ջրերի
գործարան փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական

դատարանի 13.07.2006 թվականի թիվ S-1838 վճռի դեմ՝ ըստ «Ուղթերլուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 10.03.2006 թվականի որոշումն անվավեր ճանաչելու, «Ուղթերլուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ «Armenia» ապրանքային նշանը՝ գարեջուր, հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ և այլն ապրանքային դասում (դաս 32) գրանցելուն և համապատասխան վկայագիր տալուն ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ դիմողը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.03.2006 թվականի՝ «Armenia» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը և պարտավորեցնել պատասխանողին «Ուղթերլուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ գրանցելու «Armenia» ապրանքային նշանը:

ՀՀ տնտեսական դատարանի 13.07.2006 թվականի վճռով դիմումը բավարարվել է: Սույն վճռաբեկ բողոքը ներկայացրել է երրորդ անձ «Բջնի» հանքային ջրերի գործարան փակ բաժնետիրական ընկերությունը:
Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջները.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) ՀՀ տնտեսական դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել և չի կիրառել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 1-ին և 4-րդ հոդվածները, «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 5-րդ, 6-րդ, 8-րդ կետերը, 91-րդ կետի 2-րդ ենթակետը և 92-րդ կետի 2-րդ պարբերությունը, որոնք պետք է կիրառեր և կիրառել է նույն Կարգի 7-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով: Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ, այսինքն՝ մարդու մոտ առաջացնում է նույն իմաստի ընկալման զգացողություն: Տվյալ դեպքում դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայտարկված ապրանքային նշանը առաջացնում է արդեն իսկ գրանցված «Արմենիա» ապրանքային նշանի իմաստային զգացողություն, քանի որ նշված երկու ապրանքային նշանները նույնական են ինչպես ձայնային, այսինքն՝ հնչյունային, այնպես էլ իմաստային առումով դրանք պարզապես գրված են տարբեր լեզուներով:

Փաստորեն դատարանը վճիռ կայացնելիս հաշվի է առել դիմողի կողմից գրանցման ներկայացված և երրորդ անձի անունով գրանցված ապրանքային նշանների միջև առկա միայն գունային տարբերությունը և հաշվի չի առել այն հանգամանքը, որ նշված ապրանքային նշանները նույնական են ինչպես ձայնային, այնպես էլ իմաստային առումով:

Վերը նշված փաստարկները ներկայացվել են դատարանին ինչպես գործով երրորդ

անձի, այնպես էլ պատասխանողի կողմից, սակայն դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել ներկայացված փաստարկները և վճռի պատճառաբանական մասում դրանց չի անդրադարձել:

Դատարանը, հիմնվելով միայն դիմողի հայտարարության վրա, ապրանքային նշանը համարել է ծավալային, կիրառելով Կարգի 7-րդ կետը այն պարագայում, երբ «Ուոթերլոկ» ՍՊԸ-ի կողմից գրանցման ներկայացված «Armenia» ապրանքային նշանը ծավալային նշան չէ: Արդյունքում դատարանը ապրանքային նշանի համեմատման համար հիմք է ընդունել և կիրառել է Կարգի միայն 102-րդ և 103-րդ կետերը, որոնք սահմանում են ծավալային և պատկերային ապրանքային նշանների նմանությունը որոշող չափանիշները:

Կարգի 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ Դիմողի կողմից գրանցման ներկայացված ապրանքային նշանը հանդիսանում է համակցված ապրանքային նշան, որն իր մեջ պարունակում է ինչպես բառային տարր («Armenia»), այնպես էլ պատկերային, այն է՝ տարբեր օբյեկտների պատկերներ: Ուստի, նման տեսակի ապրանքային նշանների համեմատման համար պետք է առաջնորդվել Կարգի 105-րդ կետով սահմանված դրույթներով, համաձայն որոնց՝ համակցված նշանները համեմատվում են՝

1) համակցված նշանների հետ,

2) նշանների այն տեսակների հետ, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված նշանի մեջ:

Նշված նշանների համեմատման չափանիշները սահմանվում են Կարգի 97-րդ և 103-րդ կետերով, որոնց համաձայն՝ բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային) և իմաստային (արտահայտած մտքի):

Պատկերային նշանների նմանությունը որոշվում է որոշակի հատկանիշներով, մասնավորապես իմաստային նշանակությամբ: Իմաստային նշանակության հարցը իր հերթին որոշվում է Կարգի 100-րդ կետի համաձայն, ըստ որի՝ իմաստային նմանությունը որոշվում է նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի հատկանիշների հիման վրա:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Տնտեսական դատարանի թիվ S-1838 քաղաքացիական գործով 13.07.2006 թվականին կայացված վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 26.08.2005 թվականին «Ուոթերլոկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը խնդրել է գրանցել «Armenia» ապրանքային նշանը «գարեջուր, հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ և այլն» դասում (դաս 32):

2) Դիմողի կողմից հայտարարված «Armenia» ապրանքային նշանը ըստ 26.08.2005 թվականին ՀՀ մտավոր սեփականության գործակալություն ներկայացված հայտի՝ բաղկացած է չորս մասերից, որոնք տեղադրված են կապույտ, կանաչ, սպիտակ և բաց կապույտ ֆոների վրա:

3) ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.03.2006 թվականի որոշմամբ վերը նշված գրանցման հայտը մերժվել է՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կանոնների» 15-րդ կետի

1-ին և 93-րդ կետի 1-ին ենթակետերի հիմքով, այն պատճառաբանությամբ, որ նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ապրանքների համար արդեն գրանցված «Արմենիա» ապրանքային նշանի առկայության պատճառով:

4) 25.01.2006 թվականին ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Բջնի հանքային ջրերի գործարան» փակ բաժնետիրական ընկերության անունով գրանցվել է «Արմենիա» ապրանքային նշանը՝ «գարեջուր, հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ և այլն» դասի համար (դաս 32):

5) ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 27.04.2006 թվականին տրված տեղեկությունների համաձայն՝ «Բջնի» հանքային ջրերի գործարան» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցված «Արմենիա» ապրանքային նշանը պահպանվում է մուգ և բաց վարդագույն, փիրուզագույն և երկնագույն գունային համակցությամբ, իսկ «Արմենիա» բառը ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 92-րդ կետի համաձայն՝ նշանը համարվում է այլ նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, գույներով և մնացած առանձնահատկություններով: Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն՝ մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն)՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ դատարանը, կիրառելով Կարգի 102-րդ և 103-րդ կետերը, ըստ էության «Armenia» ապրանքային նշանը համարել է ծավալային, անհիմն է, քանի որ Կարգի 105-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ համակցված նշանների նմանությունը որոշելիս օգտագործվում են Կարգի 102-րդ և 103-րդ կետերում թվարկված հատկանիշները, ինչպես նաև ուսումնասիրվում է հայտարկվող նշանի մեջ նույնական կամ նման տարրի զբաղեցրած տեղի (դիրքի) նշանակությունը:

Բողոք բերած անձի այն պնդումը, որ ապրանքային նշանը, հանդիսանալով համակցված ապրանքային նշան, իր մեջ պարունակում է բառային և պատկերային տարրեր, հետևաբար այն պետք է համեմատել այլ համակցված նշանների, ինչպես նաև այլ բառային և պատկերային նշանների հետ՝ հաշվի առնելով բառային նշանների ձայնային և իմաստային նմանությունը և պատկերային նշանների իմաստային նշանակությամբ նմանության հատկանիշը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ: «Արմենիա» ապրանքային նշանի տարր համարվող «Արմենիա» բառը չպահպանվող տարր է և Կարգի 91-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքային նշանի գերիշխող մաս չի կարող հանդիսանալ: Հետևաբար, այդ բառային տարրի համեմատությունը դիմողի կողմից հայտարկված «Armenia» ապրանքային նշանի «Armenia» բառային տարրի հետ, ապրանքային նշանների նմանության որոշման հարցում որևէ էական նշանակություն չի կարող ունենալ, քանի որ բոլոր հայտատուները «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պահպանության ինքնուրույն օբյեկտ չհամարվող նշանների (չպահպանվող տարրերի) օգտագործման նկատմամբ հավասար իրավունքներ ունեն: Հակառակ պարագայում,

կսահմանափակվի մյուս հայտատուների կողմից «Արմենիա» բառի օգտագործման իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում տարբեր հայտատուների կողմից «Արմենիա» բառի օգտագործման ցանկացած դեպքում կարող է հայտնաբերվել այդ բառերի իմաստային կամ հնչյունային (ձայնային) նմանություն: Հետևաբար, այն համակցված նշանների համեմատության դեպքում, որոնց բաղկացուցիչ տարրեր են հանդիսանում բառային և պատկերային տարրերը, իսկ բառային տարրերի համեմատությունը էական նշանակություն չի կարող ունենալ ապրանքային նշանների նմանության որոշման հարցում, ըստ էության պետք է ղեկավարվել պատկերային նշանների նմանության որոշման չափանիշներով, որոնք սահմանված են կարգի 102-րդ և 103-րդ կետերով:

ՀՀ տնտեսական դատարանը, հետազոտելով և գնահատելով գործում առկա ապացույցները նշել է, որ «Ուոթերլոկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայտարկվող՝ համակցված «Armenia» ապրանքային նշանը և «Բջնի» հանքային ջրերի գործարան» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցված «Արմենիա» ապրանքային նշանը (նշանների արտաքին տեսքերով, նշանների միջև սիմետրիայի բացակայությամբ, պատկերների տեսքով և բնույթով, հայտարկված նշանների գույների և երանգների զուգադրմամբ, համեմատվող նշաններում մոտ պատկերների (տարրերի) միմյանց նկատմամբ դասավորվածությամբ) նույնական կամ շփոթության աստիճանի նման չեն, քանի որ բացակայում է նշված ապրանքային նշաններն ընդհանուր տեսողական տպավորությամբ սպառողի կողմից շփոթելու հնարավորությունը: Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի խախտում տնտեսական դատարանը թույլ չի տվել:

Վերը հիշատակված հիմնավորումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Բջնի» հանքային ջրերի գործարան ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ տնտեսական դատարանի թիվ S-1838 քաղաքացիական գործով 13.07.2006 թվականին կայացված վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դատավոր

Հովհաննես Մանուկյան